ԿԱՂԱՆԴ ՊԱՊ

Վերադարձ Ռիգելից

DEEM COMMUNICATIONS

Астгик Симонян
Կաղանդ Պապ. Վէրադարձ Ռիգէլից

http://www.litres.ru/pages/biblio_book/?art=24429854
Կաղանդ պապ: Վերադարձ Ռիգելից:
ISBN 9781772468786

Аннотация

Հեքիաթը հայկական Ամանորի, Կաղանդ պապի, նրա ու-ղե-կից 12 խլվ-լիկ-նե-րի եւ նրանց կեն-սա-կան ո-ւժ տվող ա-րա-լեզ-նե-րի մա-սին է: Փոք-րիկ ա-ղջ-նա-կի հույ-սի ու հա-վա-տի շնոր-հիվ սերն-դե-սե-րունդ փո-խանց-ված պսպ-ղուն քա-րը դառ-նում է մի-ջոց, որ Կա-ղանդ պա-պը վե-րա-դառ-նա Հա-յաս-տան՝ իր հետ բե-րե-լով յոթ խոր-հուրդ կծիկնե-րը, ո-րոնք դա-րե-րով բյու-րե-ղա-ցել են եւ կար-գա-վո-րում են մարդ – մարդ եւ մարդ – բ-նու-թյուն հա-րա-բե-րու-թյուն-նե-րը: Կա-ղանդ պա-պի կեր-պա-րը վեր է հան-վել ազ-գագ-րա-կան նյու-թե-րի հի-ման վրա եւ ներ-կա-յաց-վել ժա-մա-նա-կա-կից մտա-ծո-ղու-թյա-նն ու ո-ճին հա-մա-պա-տաս-խան: Կա-ղանդ պա-պի ար-տա-քին կեր-պա-րը եւ հե-քի-ա-թը ստեղծ-վել են ,Ձ-մե-ռային փա-ռա-տոն, Հա-յաս-տանե–ի շր-ջա-նա-կներում հայ-տա-րար-ված մր-ցույթ-նե-րի մաս-նա-կիցնե-րի, հանձ-նախմ-բե-րի, հան-րու-թյան կար-ծիք-նե-րի հի-ման վրա:

Содержание

Կաղանդ պապ: Վերադարձ Ռիգելից 5
Конец ознакомительного фрагмента. 16

Սիմոնյան Ատղիկ Կաղանդ պապ: Վերադարձ Ռիգելից

Գիրքը նվիրում եմ երեխաներիս՝ Ամասիային, Վարանդային, Վայքին, Եփրատին, ու նրանց նմաններին, ովքեր մշտապես հավատում ու հույս են տալիս մեզ:

Ռաֆֆի Նիզիբլյան

Կաղանդ պապ:
Վերադարձ Ռիգելից

Նոր տարվա նախօրյակն էր: Շուշանիկը ոչ մի կերպ չէր համաձայնում քնել՝ առանց հեքիաթ լսելու: Ինչքան էլ մեծերը խնդրեցին՝ այս մի օրն էլ առանց հեքիաթի քնի, Շուշանիկը չհամաձայնեց: Փաթաթվելով Շուշան տատիկին ու համբուրելով նրան՝ նա կամացուկ խնդրեց իրեն առանց հեքիաթի չթողնել:

Շուշանիկի խնդրանքից ազդված՝ տատիկը զիջեց:

Շուշանիկը վազելով անկողին մտավ ու պատրաստվեց լսելու:

Տատիկը թոռնիկին արդեն պատմել էր Նոյյան տապանի, ջրհեղեղի ու Արարատի մասին: Շուշանիկը գիտեր նաև, որ հայերի նախապապը Նոյի որդի Հաբեթն էր: Նրա զարմից էր Հայկ Աղեղնավորը, ում անունով էլ մեր երկիրը Հայք էր կոչվել: Այս անգամ Շուշանիկին հետաքրքրում էր՝ Նոր տարին հին Հայաստանում նշել են, թե ոչ:

Տատիկը նախ ասաց, որ հայերը Նոր տարվան Ամանոր էին անվանում, հետո պատմեց Հայկի տոհմից Կաղանդի

մասին, որին նույն Հայկը ժամանակի պահապան էր կարգել: Նա իր մեծ մագաղաթում նշում էր բոլոր ծնունդները, մեծ ու փոքր տոները, այդ թվում նաև Ամանորը: Կաղանդը, ում տարիների ընթացքում անվանեցին Կաղանդ պապ, հայերին ոչ միայն հիշեցնում էր Ամանորի գալու մասին, այլև հենց ինքն էր անցկացնում այդ տոնը:

Պատմելու ընթացքում Շուշան տատը մոտեցավ փայտե թախտին, միջից հանեց գույնզգույն նախշերով սնդուկը, որտեղից վերցրեց քաթանե մի պստլիկ տոպրակ, բացեց և մինչ ափի մեջ շրջելը, անջատեց սենյակի լույսը: Ափի մեջ պսպղուն մի քար ընկավ: Ենջարանն այնպիսի պայծառ

լույսով ողողվեց, որ Շուշանիկը զարմանքից շունչը պահեց: Լույսը կաթնագույն էր՝ երկնագույն շողերով: Քարից արձակվող լույսը սրտի զարկերի նման մեկ ուժեղանում էր, մեկ թուլանում: Շուշան տատն ասաց, որ այդ քարն իրենց տոհմում վաղուց է «բնակվում» և անմիջական կապ ունի Կաղանդ պապի պատմության հետ: Շուշանիկը հարմար տեղավորվեց իր անկողնում՝ շարունակելով ափի մեջ ամուր սեղմել քարը:

Ամանորը Հայքում ամենագլխավոր տոներից մեկն էր: Այդ տոնին հայերը պատրաստվում էին մեծ սիրով ու ոգևորությամբ:

Տոնի հետ կապված՝ ունեին հատուկ ծիսակարգեր, սիրելի ուտեստներ, հետաքրքիր խաղեր: Կաղանդը

միայնակ դժվարանում էր իրագործել այդ ամբողջը: Երիտասարդների ու մանուկների մի խումբ մշտապես խլվլում էր նրա շուրջը՝ օգնելով ու կատարելով նրա խնդրանքը:

Իհարկե, խմբում կային նաև տարեց մարդիկ, որովհետև գործը լիովին կատարելու համար բացի երիտասարդական ավյունից ու մանկական աշխուժությունից նաև ծերունական իմաստնություն էր անհրաժեշտ: Կաղանդին օգնող խմբից տարիների ընթացքում տասներկու հոգուց կազմված մի խումբ առանձնացավ: Նրանց անվանեցին խլվլիկներ իրենց շարժունության պատճառով: Կաղանդ պապն ու խլվլիկներն այնքան սիրելի էին դարձել հայ մարդկանց համար, որ մոռանալով խլվլիկների իսկական անունները՝ նրանցից յուրաքանչյուրին նոր անուն էին տվել: Ավելին՝ տիկնիկներ էին պատրաստել նրանց նմանությամբ և պահում էին իրենց տներում: Ու քանի որ այս խլվլիկները ժողովրդի ծոցից էին դուրս եկել ու ժողովրդի շնորհիվ կենդանություն ստացել, ժողովրդի շնորհիվ էլ շարունակում էին ապրել: Նույնիսկ շատ տարիներ հետո, երբ առաջին խլվլիկները լքեցին մեր մոլորակն ու գնացին ոգիների աշխարհը, շարունակում էին մասնակցել Ամանորի արարողություններին: Պարզապես մարդիկ հավատում էին նրանց ու նրանց գոյությանը՝ պատկերացնելով, որ խլվլիկները բնակվում են Արարատի լանջին: Հենց այդ Հավատն էր, որ սնուցում էր խլվլիկներին:Նրանցից յուրաքանչյուրը ժողովրդի մեջ ուներ իր բնավորությանը մոտ մեկին, և այդ մեկն էր, որ օգնում

էր խլվլիկին կատարելագործվելու, տեսնելու իր սխալներն ու ուղղելու դրանք: Այդպիսի մարդիկ ակամա դառնում էին խլվլիկի արալեզը: Նրանց շնորհիվ էր, որ խլվլիկները լցվում էին կենդանի շնչով ու երկար տարիների կյանք կուտակում:

Շուշանիկն անհամբեր նստեց տեղում. ուզում էր իմանալ, թե հիմա որտեղ են այդ խլվլիկները: Շուշան տատը նորից պառկեցրեց թոռնիկին ու շարունակեց իր պատմությունը:

Մեծ Հայքում դժվար ժամանակներ սկսվեցին: Մեր երկիրը բաժանվեց ուժեղ օտարների միջև:

Հայ մարդը կորցրեց իր Հավատը, և թուլացավ մարդկանց ու խլվլիկների միջև կապը: Մոռացվեցին նաև շատ ու շատ տոներ, որոնք հին ժամանակներում օգնում էին նրանց ապրել, սիրել, աշխատել: Ու մի օր էլ Կաղանդ պապն ու խլվլիկները հասկացան, որ ոչ ոք իրենց չի հիշում, և ոչ ոք իրենց կարիքը չունի: Նրանք հեռացան դեպի իրենց հեռավոր նախնու՝ Հայկի համաստեղությունը: Բայց անկախ ամեն ինչից, տարին ունի իր ավարտը: Հայերը հիմա բոլորի նման տոնում են հին տարվա գնալն ու նորի գալը: Բայց Նոր տարին Ամանորից շատ է տարբերվում. չունի նրա հմայքն ու շուքը: Ավելին՝ մեզ՝ հայերիս, չի առանձնացնում: Նոր տարին բոլորինն է, բոլոր ազգերինը, իսկ Ամանորը միայն հայերինն էր: Շուշան տատը ընդհատեց պատմությունը. թոռնիկը քնել էր: Քանի որ Շուշանիկն ամուր սեղմել էր բռունցքը, տատիկը որոշեց քարը թողնել նրա ձեռքում՝ զգուշանալով, որ չարթնացնի:

Ծածկելով Շուշանիկին՝ դուրս եկավ ննջարանից՝ չկասկածելով անգամ, որ Շուշանիկի ափի մեջ սեղմված պստլիկ քարը մի նոր պատմության սկիզբ է դառնում: Դարերի ընթացքում կուտակված կենսական ուժի շնորհիվ

էր, որ Կաղանդ պապն ու խլվլիկներն ապրեցին՝ հավատալով, որ մի օր հայի մեջ կարթնանա նախնյաց ոգին ու հիշողությունը, ու հայերը կկանչեն Կաղանդ պապին ու խլվլիկներին՝ նրանց նվիրելով իրենց Հավատը: Բայց տարիներն անցնում էին լույսի արագությամբ, կենսական ուժը լքում էր Կաղանդին ու նրա խլվլիկներին, իսկ հայի հիշողությունը խոր քուն էր մտել՝ օտարի շքեղ ավանդույթներին հետևելով: Նույն գիշեր Հայկի համաստեղության ամենամեծ աստղի՝ Ռիգելի վրա, որը երկնագույն շողերով կաթնագույն լույս ունի, մեծ հավաք հրավիրվեց:

Ռիգելի վրա ապրող Կաղանդ պապը, սովորության համաձայն, քնելուց առաջ նայեց իր մագաղաթին: Նշանները ցույց էին տալիս, որ մոտենում է Ամանորի տոնը: Սիրտը ճմլվեց ցավից ու կարոտից: Սկսեց արագ–արագ փաթաթել իր մեծ մագաղաթը, երբ սրտի մեջ թույլ ջերմություն զգաց, որը շարունակում էր ուժեղանալ: Կաղանդ պապին մոտեցած խլվլիկը՝ Ճտպտիկը, որը նրա սուրհանդակն էր ու այդ պատճառով էլ նրա հետ նույն աստղի վրա էր բնակվում, Կաղանդի դեմքին վերջապես ժպիտ տեսավ: Ուրախ ծիծաղով Կաղանդը Ճտպտիկին խնդրեց շրջել Հայկի համաստեղության այն բոլոր աստղերով, որտեղ տեղավորվել էին մյուս՝ տասնմեկ խլվլիկները, և նրանց մեծ հավաքի հրավիրել: Ճտպտիկն առանց հապաղելու ճանապարհ ընկավ:

Ինչ–որ հո՞ւյս է արթնացել Կաղանդի սրտում… բայց որտեղի՞ց… ինչպե՞ս…

Ճտպտիկը հեռու չէր իրականությունից: Շուշանիկը ափում սեղմած քարի միջոցով ազդակներ էր ուղարկում Կաղանդ պապին՝ ջերմացնելով նրա սիրտը:

Конец ознакомительного фрагмента.

Текст предоставлен ООО «ЛитРес».

Прочитайте эту книгу целиком, купив полную легальную версию на ЛитРес.

Безопасно оплатить книгу можно банковской картой Visa, MasterCard, Maestro, со счета мобильного телефона, с платежного терминала, в салоне МТС или Связной, через PayPal, WebMoney, Яндекс.Деньги, QIWI Кошелек, бонусными картами или другим удобным Вам способом.